ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հուլիսի 2021 թվականի N 258-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ, 244.9-րդ, 305-րդ հոդվածների, «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» օրենքի 8-րդ հոդվածի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2021 թվականի մարտի 29-ի N 87-Ա որոշմամբ հաստատված աշխատանքային խմբի կազմած արձանագրությունը և հողերի օգտագործման և պահպանման խախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության կողմից 2021 թվականի հունիսի 22-ի կազմված N 07/09 ակտը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացի Վոլոդյա Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող 0,03325 հա մակերեսով *(կադաստրային ծածկագիր՝ 07-063-0303-0004)* գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքով հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու, հողամասերի գործառնական նշանակության և հողատեսքերի ինքնակամ փոփոխությունը չկանխելու համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի *Քաղսի* համայնքի ղեկավար ***Ռաֆայել Գրիգորյանին*** նշանակել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի *հարյուրհինգապատիկի* չափով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնքի ղեկավար ***Ռաֆայել Գրիգորյանը*** պարտավոր է սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 15-օրյա ժամկետում նշանակված տուգանքի գումարը վճարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական գանձապետարանի *900005243119* հաշվեհամարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ***Ռաֆայել Գրիգորյանին*** սույն որոշման ընդունման մասին իրազեկելուն օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2021 թվականի հուլիսի 26
ք. Հրազդան